

Խ. Հ. ՄԵԼԻՔ-ՓԱՐՍՍԴԱՅԱՆ

ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԴՈՒՅՑՆ ՑԵՐՄԻՆՆԵՐ ՀԻՆ ԵՎ ՄԻԶԱՌԱԴԱՐՅԱՆ
ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵԶ

Հայ բժշկականության պատմությամբ զբաղվողներից շատերի, ինչպես օրինակ՝ Ա. Սուբբրյանի, Ղ. Հովհանյանի և Բանձաջանի զբվածքներում խիստ տարածված է այն տեսակետը, որ հայերի մեջ բժշկականությունը ծագելու ու զարգացել է արարական բժշկության հիման վրա, և այստեղից էլ առաջ է եկել մեզ մոտ տարածված այն կանխակալ կարծիքը, թե հայերը նախքան արարակալ բժշկական գրականություն չեն ունեցել։ Ճիշտ այդպես գերմանական գիտնական լուսա Զայդելը պնդում է, որ նախքան արարակալ հայերի մեջ բժշկականությունը՝ լինելով խիստ ցածր վիճակում, հենված է եղել պրիմիտիվ էմպիրիզմի վրա և դանվել է հովիմների ու տգեսու վանականների ձեռքում։

Մեր այս աշխատառության նպատակն է ապացուցելու որ մեր հին գրականության մեջ կիրառված հունական ու հայկական բժշկական տերմինները, ինչպես նաև բժշկականության մասին եղած տեղեկությունները, ցույց են տալիս, որ հայերի մոտ նտիսարաբական շըջանի բժշկականությունը բավականաչափ զարգացած վիճակում է եղել և մշակվել է որակյալ և գիտուն բժիշկների կողմէից։

Միջնադարյան հայ բժշկական գրականության մեջ կան շատ արարական տերմիններ, բույսերի, զեղերի և հիվանդությունների անունների մեծ մասը արարեցնեն են։ Միաժամանակ նկատվում է, որ օտար տերմինների կողքին գործ են ածվում նաև հայերեն բժշկական բառեր, թեև դրանք քանակով ավելի նվազ են։

Այդպիսի բառ-տերմինների քանակը ակզբնութես ավելի շատ է եղել, քան միջին դարերի վերջերում։ Այդպես, Ամիբ-

դովլաթը հաճախ գերազասում էր հայ բառերի փոխարեն արաբական բառեր գործածել, Վերջին հանգամանքը ցույց է տալիս, որ հայերեն տերմինները ժամանակի ընթացքում իրենց տեղը զիջել են արաբականներին: Այսպես, քննելով Մխիթար Հերացու աշխատությունը՝ տեսնում ենք, որ նրա մեջ հայերեն միայն հարյուր բժշկական բառ է պատահում: Եթե այդ հարյուր բառերից զատենք նեղ մասնագիտական նշանակություն չունեցող բառերը, ինչպես, օրինակ՝ կավ, ձեթ և այլն, ապա կմնան միայն քառասունի չափ հայերեն բժշկական տերմիններ:

Հայերը, օրինակ, գործ էին ածում արմավ բառը: Աս մի պառող է, որ չի ածում Հայաստանում և Հայաստան էր բերվում արաբական երկրներից: Մի քանի դար շարունակ հայ երկիրը գտնվում էր արաբների գերիշխանության ներքո և այստեղ ծանոթ էր արաբական լեզուն, ուստի բնական կլիներ, որ արմավը կոչվեր «նախիր», ինչպես, օրինակ՝ կոմաղղեղի փոխարեն կործ են ածել զանջապիր նույնը պիտի ասել տաճիկ կրեպ տերմինի մասին: Այս գեպքում էլ բնական կլիներ, որ հայերը գործածեին նրա արաբական «Սամի արտրի» անունը (Gummi arabicum) կամ կղբու ձուի փոխարեն՝ «Խուսաթթըլ պահրի», հնդիկ աղի փոխարեն՝ «մալի հնդիկ», և այսպես նաև այլ գեպքերում:

Այս գեպքերում հայերեն բառերի գործածությունը ցույց է տալիս, որ այս բառերը հայերն ունեցել են նախքան արաբների աիրապետությունը Հայաստանում: Եթե նշան բառերը մինչև այդ կիրարկություն գտած և արմատացած չլինեին, ապա նրանց փոխարեն հայերը անշուշտ գործ կածեին արաբական բառեր, որոնք հեշտությամբ կյուրացվեին հայերի կողմից:

Հայերեն տերմիններից զատ գործ էին ածվում և որոշ քանակությամբ հունարենից վերցրած բժշկական բառեր, ինչպես, օրինակ՝

1. Անիսոն
2. Աստրոն
3. Նիտրոն
4. Վլիտոն
5. Պետարիոն
6. Պաքսեմիտ

Այս բառերը հունարենից փոխ են առել ինչպես հայերը՝ այնպես էլ արաբները, բայց վերջիններս զրանք որոշ փոփոխության են ենթարկել համաձայն իրենց հնչյունաբանության:

Այնպես՝ ստացվել է հետեւալ պատկերը.

| | Հունարեն | Հայերեն | Արաբերեն |
|---|------------|---------|----------|
| 1 | Anison | Անիսոն | Անիսոն |
| 2 | Asaron | Ասարոն | Ասարոն |
| 3 | Nitron | Նիտրոն | Նիտրոն |
| 4 | Bliton | Վլիտոն | չկա |
| 5 | Eupatarion | Գևաթիոն | Բաթրոն |
| 6 | Paxemit | Պաքսմիտ | Բաքսմաթ |

Համեմատությունից երևում է, որ մինչդեռ հայերը հունական բառերը կամ պահել են անփոփոխ, կամ ենթարկել նվազ փոփոխությունների, արաբները բոլոր բառերն անխոտիք հնչափոխել են։ Այստեղից էլ պարզ է, որ հայերը այս բառերն անմիջապես հույյներից են քաղել։

Հետաքրքրական է ևս մի երեսույթ, Միջին դարերում հույները՝ մոռացության մատնելով իրենց մի քանի ընիկ բառերը, սկսել են գործածել արաբների կողմից հնչափոխած հունարեն բառեր, մինչդեռ հայերը զբանք պահպանել են անփոփոխ, օրինակ՝

| Հունարեն | Հայերեն | Արաբերեն | Միջնադարյան հունարեն |
|----------|---------|----------|-------------------------|
| Anison | Անիսոն | Անիսոն | Anisun |
| Asaron | Ասարոն | Ասարոն | Asarun |

Սրանք մի ավելորդ անգամ ապացուցում են այն, որ հայերը հունական բառերը փոխ են առել անմիջապես հույյներից, թնդության առարկա այս բառերը դեղերի և բույսերի անուն-

ներ են, որոնք կարող էին անցնել հայերին վաճառականների և հոգևորականների միջոցով, առանց մասնագետ բժշկի անմիջական մասնակցության Սակայն մերթ ընդ մերթ հանդիպում են նաև այնպիսի բառեր, որոնք կարող էին գործածել միմիայն բժիշկները Դրանք այն բառերն են, որոնք կապված են Գալենի հումորալ պաթոլոգիայի տեսության հետ: Հստ այդմ ակներև է դառնում, որ հայերն ունեցել են իրենց սեփական բժշկական աերմինները՝ անկախ և հույներից, և արաբներից, Բերենք մի քանի օրինակ:

| Հումորին | Հայերին | Արտքերեն |
|---------------|----------------------------|----------|
| (լո). Humor | Հիւլի, նիւլի, դիճուլիւն | Խ ւ ա |
| Pneuma | Շունչ - հոգի | Պուխար |
| Phlegma | Մաղաս | Բաղլամ |
| Choly | Խարակիաշ Ժաղձ | Սաֆլայ |
| Melania choly | Սկ ժաղձ | Սակամայ |

Արանք զուտ բժշկական տերմիններ են, որ ոչ մի դեպքում չէին կարող առաջանալ արաբական շրջանում: Ավելին՝ մի քանի դար անց՝ անգամ արաբական շրջանում, նրանք դեռ մնացել էին հայ լեզվի մեջ և միայն 12—15-րդ դարերում են հետընդհանուր իրենց անդերը զիշել արաբական տերմիններին:

Վերը թվարկածս հունարեն տերմինները, որը նույնպես նախարարական շրջանում են մտել հայ լեզվի մեջ, չէին կարող՝ բերանից բերան ավանդվելով՝ անփոփոխ վիճակում հասնել մինչև 12—15-րդ դարերը: Դրանք կարող էին միայն մի դեպքում այդքան երկար մնալ մեր լեզվի մեջ՝ եթե գրականության միջոցով անցնեին մի դարաշրջանից մյուսը:

Մի հետադարձ հայացք ձգենք գեպի մեր նախարարական շրջանի գրականությունը և տեսնենք՝ առկա չեն, արդյոք, այդ բառ-տերմինները հայերնի մեջ այդ շրջանում:

Աչքի ածենք, նախ, մինչարաբական շրջանի բնագիտական բովանդակություն ունեցող զրքերը:

Այս կարգի զրական հուշարձաններից մեզ հայտնի է Նեմեսիսի «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատությունը, որ գրվել է 4-րդ դարում և յոյութեր է պարունակում անտոռիայի և հոգեբանության վերաբերյալ Հեղինակը դիմե, որ կան կենդանիներ առանց գլխի, կամ բույսի նման անշարժ կենդանիներ, ինչպես սպունդը, որ մարդու և կապկի մեջ ընդհանուր գծեր կան նա գտնում է, որ խոսելու պրոցեսը մի օրդանի հետ չի կապված, այլ կախումն ունի մի շարք օրդաններից, ինչպես, օրինակ, մկաններից, փորոտիքից, թոքերից, շնչափողից, խոչափողից, լեզվից, բերանից և այլն: Բայց դրանք ել բավական չեն խոսելու համար, որովհետև ի ծնե խուլերը՝ ունենալով հիշածն բոլոր օրդանները՝ այնուամենայնիվ չեն կարողանում խոսել: Նեմեսիսի պատճեններն ընդունում է խաչաձև: Նա ընդունում է Գուլենի անսակետը, ըստ որի՝ մարդուս արտամադրությունն առաջ է դալիս մաղձը սամանոքսում կուտակվելուց, իսկ հոգեկան հիվանդությունները, ինչպես փունիտը հետևանք է այն բանի, որ մաղձն ուղեղում է կուտակվել: Այս գիրքը թարգմանված է հայերեն Կոստանդնուպոլիսում 772 թվին: Սակայն, թեև այդ թարգմանությունը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ արաբներն արդեն մոտ 120 տարի իշխում էին Հայաստանում, բայց նրա թարգմանիչները չեն գործածել ոչ մի արաբական բառ կամ տեղմիտ:

Նեմեսիսը գործ է ածում մոտ հարյուր բնագիտական բառներ-աերմիններ, որոնց մեջ չկա ոչ մի արաբական բառ, իսկ հաւաքեն՝ միայն մի քանի բառ: Այդ բոլորը թույլ է տալիս մեզ պնդելու, որ Նեմեսիսի թարգմանությունը տեղի է ունեցել մի ժամանակ, երբ արաբական բժշկությունը դեռ հայերեն ծանօթ չէր, Նրա ոճը նախարարական է: Այդ թարգմանության մեջ կան մի քանի բառեր, որոնք առկա են նաև Մ. Հերացու մոտ և որոնց մասին ենթադրել ենք, թե զրանք նախարաբական ջրջանից են դալիս: Այդ բառ-աերմիններն են: —

Դիմութիւն, մաղաս, դեղին մաղձ, սև մաղձ, երակ, շնչերակ:

Բացի այդ՝ թարգմանության մեջ կան նաև մի քանի բառ-աեր, որոնց վրա առանձնապես պիտի կանգ առնենք: Դրանք են՝

տարրը, նեարդ և ջիլ բառերը: Նախարարական տարր բառին հանդիպում ենք արարական շրջանում. իսկ նեարդ և ջիլ բառերը ուղադրավ են այն տեսակետից, որ գեռ նախարարական շրջանում հայ բնագետները տարրերում էին նյարդը Ջիլից, մինչդեռ անգամ ներկայումս ներվային կամ նյարդային բառերի տեղ հաճախ գործ են ածում զբային բառը, նյարդը և Ջիլը հոմանիշներ համարելով:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ նեմեսիոսի «Յաղագա ընոթեան մարդոյ» աշխատության մեջ կան բավականաշատ հայերին բժշկական բառեր, որոնք կազ չունեն արարական շըրջանում մեր լիզիքի մեջ ընդունված արարական փոխառությունների հետ:

«Յաղագա կաղմութեան մարդոյ» աշխատությունը, որ գրել է Գրիգոր Նյուևացին և թարգմանված է հայերեն նախարարական շրջանում, դարձյալ պարունակում է մի քանի հետաքրքրական բառեր, ինչպես օրինակ՝ պատակ, սարգոսաւայն և այլն:

Բայց ավելի հարուստ նյութ է պարունակում այդ տեսակետից «Բառք Գաղիանոսի» բառարանը, որը ցարդ չի հրատարակված: Ալիշանը քաղել է «Բառք Գաղիանոսից» բույսերի անունները. նույնն արել են Ս. Երեմյանը, Ն. Բյուզանդացին և Զ. Աճառյանը: Այնուամենայնիվ գեռս նացել են չուսումնասիրված մի շարք բառեր, որոնք ըստ ամենայնի արժանի են առանձին ուղադրության:

Այդ պատճառով էլ մենք կարենք ենք համարում փոքր ինչ կանգ առնել այդ հետաքրքրական բառարանի վրա:

Մատենադարանում կան թվով 31 ձեռագիր, որոնք բովանդակում են «Բառք Գաղիանոսի» բառարանը: Այդ գրչագրերը գրված են 13—18-րդ դարերում:

«Բառք Գաղիանոսի» աշխատության ամենահին ձեռագրերը (13-րդ դարի) մեզ լրիվ չեն հասել Նրա մեջ բառերը հասնում են մինչև «ա» տառի կեսը և պարունակում ընդամենը 413 բառ: Նկատվում է, որ զբանք արտագրված են ավելի հին գրչագիր օրինակից:

Մեծ հետաքրքրության է արժանի № 7117 ձեռագիրը, որը թեև համեմատաբար նոր ձեռագիր է (15-րդ դարի), բայց ավելի լրիվ է, քան 13-րդ դարինը: Այս ձեռագիրը պարունակում է 502 բառ: Բառաշարը հասնում է մինչև «ք» տառը: Արան նման է նաև ձեռագիր № 6624-ը, որ գրված է 17-րդ դարում: Ահա այս

վերջին ձեռագրի մեջ 502 բառից 325 բառը հունարեն է, 56-ը՝
արաբերեն և 121-ը՝ տղավաղված հունարեն։ Դժվար է որոշակի-
պնդել, թե ինչպես է կատարվել այդ աղավաղումը. արդյոք ար-
տազբողների կողմից, թե այն պատճառով, որ՝ անցնելով արա-
բերենին՝ աղավաղվել են արաբական տառաղարձության համե-
մատ Հաղանական է, որ այդ հարցում հիշյալ երկու գործոն-
ներն ել դեր են խաղացել Սակայն հետաքրքրական է մի իրո-
ղություն, որ մեզ հասած «Բառք Գաղիանոսին» աշխատությունը,
կաղմված լինելով արաբական տիրապետության շրջանում, այ-
նուամենայի բառերի մնալով մեծամասնությունը պահում է
զուտ հունական և միայն փոքր մասն է արաբական ձևով։ Սա
ցույց է տալիս, որ «Բառք Գաղիանոսին» կաղմված է եղել այն
ժամանակ, երբ արաբական բժշկական դպրոցը զեռ տարած-
ված չէր հայերի մեջ, այսինքն՝ զրվել է արաբական դարաշր-
ջանից առաջ Ըստ այս պետք է ենթադրել, որ եղած մի քանի-
տասնյակ արաբական բառերն ել հետաղյումն են մտել բառա-
րանի մեջ։

«Բառք Գաղիանոսին» մի բառարանն է, որի մեջ օտար բա-
ռերը զրված են հայերեն տառադարձությամբ, ապա տրված է
զրանց թարգմանությունը հայերեն մի համապատասխան բա-
ռով։ Առաջին հայացքից այն տպավորությունն է ստացվում, թե
այս բառարանը մի ինչ որ զրքի հավելված պետք է եղած լինի։
Սակայն, քանի որ այդ գիրքը չի հայտաբերված, նրա մասին
առայժմ դժվար է որոշ դաղավար կաղմել։

Ըստ այդ բառարանի պետք է ենթադրել, որ մինչև Հ դա-
րը հայ բժիշկները գործ էին ածում հետեւյալ հունարեն բառերը.
Բուսական աշխարհից՝ Althea, Aison, Thyma, Helleboros,
Ptelea, Scordon.

Կենդանական աշխարհից՝ Alopex, Bubalos, Arcos, Chameleons.

Դեղանյուրերից՝ Arsenik, Ladanon, Kimeros, Opion, Napisos, Antidotos.

Անատոմիական տերմիններ և հիվանդությունների անուններ՝
Arteria, bronchos, erysipelas, hypochondria, hysteria և այլն։

Ահա այս հունարեն բառերի կողքին գեռ X դարում կային-
նարանց հոմանիշ հայերեն բառերը, որոնք արաբական աղղեցու-
թյան դարաշրջանում անհետացել են և փոխարինվել արաբական
բառ ու տերմիններով։

Բացի այդ, հայ ուշ միջնադարյան բժշկական գրականության մեջ նկատվում են մի քանի հունական բառեր, որոնք չկան «Բառք Գաղիանոսի» մեջ, հետեւապես պետք է ենթադրել որ հայերի մեջ հունական բժշկական բառերի քանակը ավելի շատ է եղել, քան թե այն, որ մենք հանդիպում ենք «Բառք Գաղիանոսի» մեջ:

Անցնելով մեր հնագույն թարգմանական և ինքնուրույն գրականությանը՝ պետք է նշել, որ այդ շրջանում գրած ոչ բըժշկական բովանդակություն ունեցող գրքերում շատ հաճախ կարելի է բժշկութեան բովանդակությամբ նյութեր գտնել Մեր հնագույն մատենագիրներից մեկը, Ագաթանգեղոսը, իր գրքի առաջաբանում մի քանի անգամ հիշում է, թե վաճառականները հեռավոր երկրներից բժիշկների համար բերում են զանապան խունկեր, օգտակար դեղեր ու արմատներ, Ապա խոսնելով Գրիգոր Լուսավորչի մասին՝ գրում է, որ սա բժշկում էր՝ բորոտներին, գոսացյալներին, գոնջացյալներին, դիվահարներին, պատապրոսներին և որովայնի ջրգողներին Դժվար թե այդ բառերը նյութական-տառացի թարգմանություն լինեին հունարենից, որովհետև որքան էլ թարգմանչին քաջատեղյակ համարենք հունարենին, այնուամենայնիվ այնքան էլ դյուրին չէր 5-րդ գարում բորոտը գոսացյալից կամ գոնջացյալից զանազանները Հատ երեսութին, նշած տեղեկությունները քաղելիս՝ նա դիմել է հունարենին և հայերենին քաջատեղյակ բժիշկների, կամ ձեռքի տակ ունեցել է հունարենից հայերեն բժշկական բառարան: Վերջին ենթադրությունը, կարծում ենք, այնքան էլ հավանական չէ, որովհետև դժվար թե մեր գրականության ակդրնտկան զրջանում այդպիսի հույն-հայ մասնագիտական բառարան գոյություն ունենար. ավելի հավանական է այն, որ հեղինակը օգտվել է մի հունագիտ բժշկի բերանացի բացատրությունից կամ ինքն էլ ծանոթ է եղել բժշկական խնդիրների հետ:

Մովսես Խորենացին գրում է, որ Թաղեասը բժշկեց Արգարին ու նրա պալատական իշխանին, որը տառապում էր պատագրոս հիվանդությամբ: Մի այլ տեղ նա հիշում է, որ Կոստանդին Մեծը տառապում էր ելեփանտական հիվանդությամբ, որ Տրդատ թագավորին թռնավորել են մոլեխինդով, այն թույնով, որով աթենացիները թռւնավորեցին Սոկրատեսին:

Հատ Եղիշեի՝ երեսում է, որ զեռ 5-րդ գարում բժիշկը ձեռ-

քը տանում էր հիվանդի մարմինը քննելու համար, որ իմանաթե մարմինը չեղմ է, կամ սիրտը հանդարտ է աշխատում, կամ լյարդը կակռւղ է, կամ երակների զարկը ինչպես է աշխատում: Հետեապես գեր այն ժամանակ կային բարձր որակի բժիշկներ:

Փալստոս Բյուղանդը զրում է, թե Ներսես Սեծին առաջարկեցին անդեպայ, կարծելով, որ նա թունավորված է:

Արարատյան դաշտը նկարագրելիս՝ Դազար Փարպեցին անգանում է նրան դարմաններով հարուստ աշխարհ և հետո ավելացնում է, որ այստեղ կային զանազան բույսերի արմատներ, որոնցից ստուգահմուտ բժիշկները պատրաստում էին դեղորայք երկարան ցավով տառապող ախտացյալների համար:

Բայց ամենից շատ բժշկական տեղեկություններ հաղորդում է Եղիկը Կողբացին:

Եղիկը կրոնավոր է, Նա իր գրվածքներով ընթերցողին կամբենում է ապացուցել, որ միակ ճշմարիտ ուսմունքը քրիստոնեական կրոնն է, իսկ մասցաները՝ հեթանոսությունը, պարսից քերը, Մարկիոնի աղանդը և հունական փիլիսոփայական հայցքները թյուր են և եղծ: Նրա կարծիքով՝ Աստվածաշունչը միակ հեղինակությունն է և առավելագույն ճշմարտացին:

Այստեղ էլ նա ընդունում է բժիշկների այն տեսակետը, թե հոգեկան հիվանդությունները առաջ են դալիս ուղեղում կուտակված ինչ որ նյութերի հետևանքով, որոնց հեռացումով հիվանդություններն ապաքինվում են: Չնայած դրան, նա միաժամանակ ընդունում է, որ երբեմն հիվանդությունների պատճառը լինում են դեկերը, ինչպես այդ մենք տեսնում ենք ավետարանի մեջ:

Եղիկը ընդունում է բժիշկների այն բացատրությունը, թե երազները մարմնի ցանկության կամ նրա վատթար դրության հետևանքը հն: Բայց նա կարծում է, որ նրանց մի մասը, ինչպես և ըստ Աստվածաշնչի՝ Հովսեփի և Դանիելի երազները, աստծո նշաններ կամ հայտնություններ են: Նույնպես նա համաձայն է, որ հորանջելը հոդնածության նշան է, դա մաղասի կուտակման հետևանքով է առաջանում, ինչպես բացատրում են բժիշկները: Նա համաձայն է, որ փռաշոցը ցըտից է առաջանում, և չի հավատում, որ դա հրեշտակների գործն է և այլն: Այս բոլորից հետո այն ապավորությունն է ստացվում, որ զբողը իբրև մի կրօնավորաշխատում է որոշ տուրք տալ քրիստոնեական ուսմունքին ի-

միաս բժշկական ռացիոնալիստական տեսակետի. Սակայն այդ շնորհալի պուեմիստ կրօնավորը, երբ հարցը վերաբերում է այլ կրօնների տեսակետին, նա նրանց գես ելնում է իրըև մի գիտնական զինված յուր ժամանակի առաջադիմ ընադիտական ուսմոնքի ավլյաներով: Ամեն մի նյութ, առանձին վերցրած, կարող է և լավ, և վատ աղղեցություն ունենալ, օրինակ՝ արեգակն այրում է ամեն ինչ, մինչդեռ նրա ջերմությունը՝ խառնված ջրի հետ՝ պատճառ է դառնում բռայսերի անման: Իր այս տեսակենաց ավելի համոզիչ դարձնելու նպատակով՝ նա բերում է նաև կոնկրետ օրինակներ բժշկությունից, օրինակ՝ եթե մանրագորը առանձին տրվի մարդուն՝ մահաբեր է, իսկ այլ նյութերի հետ խառնված՝ թնարեր միջոց է: Այդ նույն հատկությունն ունեն և կաղանչանը, հազարը, որոնք առանց խառնուրդի վնասակար են, իսկ խառնուրդով՝ թմրեցուցիչ և մարդու ցանկությունը պականեցնող: Մոլիխինը դարերից ի վեր հայտնի է եղել իրըն սպանիչ միջոց, մինչդեռ նա, իրըն խառնուրդ, քնարեր է:

Հաճախ Եզնիկը գիմում է բժշկական կոնկրետ օրինակների ոչ միայն իր փիլիսոփայական «Եղծ աղանդոցի», այլև բարոյական խրատների, իմաստալից ասացվածքների և աֆորիզմների մեջ, օրինակ՝

1. Մարմինը միշտ պատերազմի մեջ է և ծերությունն ու հիվանդությունը նշաններ են, որ մարմի վատանքները բազմացել են:

2. Մեծ հերձվածող և անբժշկելի չարիք է այն առաջնորդը, որը ծամարության հակառակ գործեր կատարելով՝ վատ օրինակ է դառնում ուրիշների համար:

3. Տգետ առաջնորդը փոխանակ բժշկելու մարմինը՝ ավելի վնաս է հասցնում:

Բացի այդ, Եզնիկի մոտ մենք հանդիպում ենք մոտ 40 բժշկական բառ-տերմինների, Հիւենք այստեղ միայն մի քանիսը՝ տարր, նիւթ, հիւթ, հիւղ, գիճութիւն, մահտարաժամ, թալար, ցնորիլ, հատանիչ, մաղձ, մաղաս, մանրաշոր, մոլիխինդ, կանեփուկ, թերիտակ, հազար, կաղանչան և այլն:

Եվ այս բարորը՝ մի կրօնական-փիլիսոփայական զրվածքի մեջ, և այն էլ մի պեպօւմ, երբ նրա աշխատության բուն նը-պատակն է եղել պտշտպանել իր կրօնական հայացքները:

Այնուհետև նկատվում է, որ Եզնիկյան որոշ բառեր, ինչպես, օրինակ՝ տարր, անդեղայ, նիւթ, հիւթ, մինչև 15-րդ դարը

մեր լեզվից անհետանում են: Արաբական բառերը դրանց հետըզ-
հետի դուրս են մղում ու գրավում դրանց տեղը: Բայց կան բա-
ռեր, ի թիվս զբանց նաև բժիշկ բառը, որ մեր գրականության
մեջ հարատեսում են: բժիշկ-ը մեր հարեւն ժողովուրդների մոտ
վաղուց է փոխարինվել «հեթիմ» բառով: Մեզ մոտ հեթիմը
միայն 15-րդ դարից է գործածվում գրականության մեջ և այն
էլ սակագի: Դրա պատճառն այն է, որ մեր սեփական բժիշկները,
որոնք ունեցել են իրենց ձեռքին բժշկության վերաբերյալ նյու-
թեր ու գրականություն, հետևելով այդ գրականությանը՝ շարու-
նակել են 5—15-րդ դարը գործածել արդեն քաղաքացիություն
ընդունած, հանրային սեփականություն գարձած բժշկական բառ-
աերմինները, ինչպես, օրինակ՝ բժշկելի, բժշկելի, բուժելի,
քիչ, անբուժելի, անբժշկելի, բժշկություն և այլն, կամ՝ մաղաս,
զիճություն և նման բազմաթիվ բառեր:

Խիստ ուշազրավ է, որ որոշ բառեր, որոնք առկա էին
ու գործածական 5-րդ դարում, հետագայում անհետանում են և
15-րդ դարում նորից երևան գալիս:

Ընդհանուր առմամբ մենք ստանում ենք հետևյալ պատ-
կերը.

1. Կան բառեր, որոնք 5-րդ դարից հետո շարունակում են
անընդհատ հանդիպել նաև հետագա դաշերում մինչև 15-րդ
դարը.

2. Կան բառեր, որոնք 5—10-րդ դարերում գործածական
լինելով, հետագայում անհետանում են:

3. Կան բառեր, որոնք գործ են ածվում միայն 5-րդ դա-
րում և այսուհետև անհետանում են.

4. Վերջապես կան բառեր, որոնք 5-րդ դարից հետո անհե-
տանալով՝ 12—15-րդ դարերում նորից երևան են գալիս:

Բերենք մի քանի օրինակներ.

| 5-րդ դար | 10-րդ դար | 12—15-րդ դար. |
|-----------|-----------|---------------|
| Գիճութիւն | զիճութիւն | զիճութիւն |
| Մաղաս | մաղաս | մաղաս |
| Մաղձ | մաղձ | մաղձ |
| Անդեղայ | անդեղայ | — |

| 5-րդ դար | 10-րդ դար | 12—15 րդ դար. |
|-----------|-----------|---------------|
| Նիւթ | Նիւթ | Նիւթ |
| Տարբ | տարբ | տարբ (տարերք) |
| Խառնուածք | Խառնուածք | Խառնուածք |
| Հիւթ | — | — |
| Մանրագոր | — | — |
| Կաղանչան | — | Կաղանչան |
| Հաղար | — | Հաղար |
| Մոլեխինդ | մոլեխինդ | — |
| Աւշինդր | — | աւշինդր |
| Կանեփուկ | — | Կանեփուկ |

Որ որոշ բառեր իրենց գործածությունը պահպանել են մինչև
 15-րդ դարը՝ այդ բնական է, որ որոշ բառեր արաբական շրջա-
 նում անհետացել են, այդ ևս բացատրելի է. որ որոշ բառեր
 5-րդ դարից հետո երևան չեն եկել, այդ ևս կարող է պատա-
 հել. բայց որ որոշ բառեր եղել են 5-րդ դարում, ապա անհե-
 տացել են փոխանակ փոխարինվելու արաբական կամ որևէ այլ
 բառ-տերմինով և ապա նորից երևան են եկել նույն ձևով, ինչ-
 պես 5-րդ դարում, —դա կարելի է միայն մի կերպ բացատրել.
 Շատ հավանական է, որ այդ բառերը՝ 5—15-րդ դարերի ըն-
 թացքում մնալով որևէ բժշկական կամ բնագիտական գրքի մեջ,
 հետագայում հասել են մեր միջնադարյան բժիշկներին. Այդ
 գրքի կամ գրքերի մեջ հայերեն բառերի կողքին եղել են նրանց
 հունարեն հոմանիշները, և մեր միջնադարյան բժիշկները՝ բաղ-
 դատելով դրանք հունական, արաբական բառ-տերմինների հետ,
 հեշտությամբ կարողացել են այդ բառերը մոռացությունից դուրս
 հանել և նորից կյանքի կոչել:

Այսպիսով, ընդունելով միայն բառերի քննությունը, մենք
 գալիս ենք այն եղբակացության, որ մեր միջնադարյան բժիշկներն
 օգտվել են մեր նախարարական շրջանի բժիշկների երկերից, և
 այն, որ արաբական բժշկականությունը նրանց միակ աղբյու-
 րը չի եղել, ինչպես կարծում են մի շարք բանասերներ:

Ի լրումն այս բոլորի ասենք, որ բացի այն բառերից,
 որոնք պահպանված են Եղնիկի մոտ, 5-րդ դարում մենք հանո-
 ղիպում ենք նաև վաթսունից ավելի բուսական բառերի, ինչպես,
 օրինակ՝ գլուռ, աւշինդր և այլն. Անանիա Շիրակացին ևս գործ-

է ածում մի քանի բժշկական ու բնադիտական բառեր և հիշում
է Հիպոկրատի ու Ասկլեպիազի անունները:

Հօգուս մեր նախարարական բժշկականության խոսում են
նաև Մխիթար Գոշի առակները: Մխիթար Գոշի 190 առակներից
54-ը վերաբերում են բույսերին, Դրանց մեջ հիշվում են 77
տեսակ բույսերի անուններ, որոնցից միայն երկուսը պարսկա-
կան ծագում ունեն: Այդ 54 առակներից 17-ի բովանդակու-
թյունը բժշկական է, երկու անգամ հիշատակվում է Գաղիանոսի
անունը: Առակների ստվար մասը Մխիթար Գոշը ինքը չի հնա-
րել Դրանք դոյություն են ունեցել ժողովրդի մեջ դարեր շարու-
նակ: Գոշը միայն հավաքել է ու մշակել Այդ ևս ցույց է տալիս,
որ նախքան արարները բժշկությունը տարածված է եղել մեր
երկրում:

Ակամա հարց է ծագում՝ իսկ այդ բժշկականությունն ի՞նչ
մակարդակի վրա էր կանգնած և ում ձեռքումն էր գտնվում՝
բժիշկների, թէ պատահական տգետ վանականների ու հովիվների:

Այդ հարցին պատասխան է տալիս մեզ հետեւյալ պատմա-
կան փաստաթուղթը:

Հինգերորդ դարի վերջին քառորդի անվանի մատենագիր և
աղդեցիկ կաթողիկոս Հովհան Մանդակունին իր ճառերից մե-
կում դիմում է ժողովրդին ու առաջարկում նրան, որ իրեն հե-
ռաւ պահի հուսթիչներից, այսինքն՝ այնպիսի կախարդներից,
որոնք կախարդված ուլունքներ են կարում մարդկանց հագուս-
տի վրա՝ նրանց չար աչքից հնուռ պահելու համար: Նա արգե-
լում է ժողովրդին զիմելու հմայիչներին, որովհետև նրանք
սուտ գուշակություններ են անում: Նա դեմ է և խարիչներին,
որոնք իրր թե որոշում են, թե որ ժամն է բարի այս կամ այն
գործը կատարելու համար, վերջապես, նա դեմ է դուրս դալիս
բարբաջողներին, որոնք անմիտ խոսքերով իրը թե մարդկանց
չարից հեռու են պահում: Մանդակունին միաժամանակ ավելաց-
նում է, որ ուժանք ասում են, թե դիմում են կախարդներին
բժշկություն ստանալու համար: Հենց այդպիսի մարդկանց գեմ
է ենում Մանդակունին: Նա կտրուկ մերժում է այդ բացատ-
րությունը, պատճառաբանելով, որ բժշկի գործն է խարեւ,
կտրել և գարմանել հիվանդին և ոչ թե հուսթել կամ հմայել:

Այսպիսի ամբողջական լրիվ կարծիք բժիշկների մասին
կարող էր կազմվել միայն այն դեպքում, եթե այդ երկում իս-
կապիս առկա էին որակյալ և հսում բժիշկներ, որոնք բացի

բժշկությունից այլ կողմանակի և սնապաշտ գործերով չէին զբաղվում: Զմոռանանք, որ Հովհան Մանդակունին բժիշկների մասին այս տեսակետն ունեցել է 5-րդ դարում, մինչդեռ այսօր էլ Եվրոպայում կարելի է գտնել բավականաշափ կրթություն ստացած մարդիկ, որոնք դեռ հավատ են ընծայում հմայիչներին, հուռթիչներին ու կախարդներին:

Նախարարական շրջանի բժիշկներից հասել են մեղ ավելի քան 800 բժշկական բառեր: Հետևապես սխալ է այն տեսակետը, որ արարարական բժշկականության ազդեցությամբ է հայերի մեջ բժշկական գիտելիքներ և բժշկականություն զարգացնել: Բժշկականությունը մինչարարական շրջանի հայերի մեջ սերտորեն կապված է եղել հուռական բժշկական գպրոցի հետ և միայն վերջինիս անկումից հետո, երբ արարաները տիրում են Հայաստանին, արարական բժշկականությունը նպաստում է հայ բժշկականության վերածնողին:

Ե Զ Ր Ա Կ Ա Ճ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Միջնադարյան հայ բժշկական գրականության մեջ, բացի արարական տերմիններից, կան նաև որոշ քանակությամբ հայերեն ու հուռարեն բժշկական տերմիններ, որոնք մնացել են նախարարական դարաշրջանի բժշկականությունից: Սրանք ապացույց են, որ հույն բժշկական գպրոցը ծանոթ էր հայերին նախքան արարների արշավանքները:

2. Նեմիսիոնի «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատությունը և մի քանի այլ գրքեր վկայում են, թե արարաների տիրապետության շրջանում հայերի մեջ շարունակում էին գոյություն ունենալ անմիջապես հուռարենից թարգմանված բժշկական բովանդակությամբ գրքեր:

3. «Բառք Գաղիանոսի» աշխատությունը պարունակում է ավելի քան 300 հունարեն բառեր, որոնք կարող էին միայն նախարարական դարաշրջանում մուտք գործած լինել հայ գրականության մեջ:

4. Նախարարական շրջանի հայ գրականության մեջ գրեթե բոլոր հեղինակների մոտ մենք հանդիպում ենք բժշկական բառերի և բժշկության մասին տվյալների, որոնք հավաստում են այն, որ բժշկականությունը Հայաստանում գտնվում էր առաջավոր և ձեռնհաս բժիշկների ձեռքում:

5. Նախարարական շրջանի հայերի բժշկականությունը անմիջապես կապված էր հունական դպրոցի հետ և միայն վերջինիս անկաման դարաշրջանում արարական բժշկականությունը խթան է հանդիսանում նրա վերածննդին:

Х. А. МЕЛИК-ПАРСАДАНЯН

ДРЕВНЕАРМЯНСКИЕ МЕДИЦИНСКИЕ ТЕРМИНЫ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ.

Автор приводит данные, свидетельствующие о том, что в средневековой армянской медицинской литературе сохранилось много медицинских терминов, которые применялись еще до возникновения арабской медицины.

Ряд приводимых автором сведений из литературы V века показывает, что медицина у армян в эту пору стояла на высоком уровне, нося все черты греческих влияний. Обилие же в позднейшей средневековой армянской медицине терминов, перенятых с арабского языка, объясняется тем, что в эту эпоху влияние арабской медицины на медицину народов Передней Азии было исключительно велико. Даже греки и представители возрождающейся европейской медицины в Салерно широко пользовались арабскими терминами.